ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

**Է Ջ Մ Ի Ա Ծ Ն Ի
Ք Ա Ղ Ա Ք Ա Պ Ե Տ Ա Ր Ա Ն**

1101 ք.Էջմիածին, Մաշտոցի 0
հեռ. +374(231)52727 ֆաքս.+374(231)45663
էլ. փոստ: echmun@mail.ru

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКИЙ МАРЗ

**МЭРИЯ
ГОРОДА ЭЧМИАДЗИНА**

1101 г.Эчмиадзин, ул. Маштоца 0
тел.+374(231)52727 факс.+374(231)45663
эл.почта: echmun@mail.ru

REPUBLIC OF ARMENIA, ARMAVIR'S MARZ, MUNICIPALITY OF THE CITY ECHMIADZIN
1101 Echmiadzin, st. Mashtots 0 tel. +374(231)52727 fax: +374(231)45663 e-mail: echmun@mail.ru

№ 1441 «__» դեկտեմբերի 27 2012թ.

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն մարզպետ.

Կից ուղարկվում է էջմիածնի քաղաքապետի 2012թ. դեկտեմբերի 17-ի թիվ 650 և էջմիածին քաղաքի ավագանու 2012թ. դեկտեմբերի 21-ի թիվ 2 նիստի թիվ 21 որոշումների քաղվածքները, բյուջեի համապատասխան հատվածները և փոփոխված նախահաշիվները:

Առդիր թերթ:

ԷՋՄԻԱԾՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

«28» 12 2012 01/12/02-12

Կատարող՝ Կ. Խաչբերդյան
հեռ. /0231/ 5-36-63 /510/

ՔԱՂՎԱԾՔ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

# ԷՋՄԻԱԾՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 650

«17» դեկտեմբերի 2012թ. ք. Էջմիածին

### ԷՋՄԻԱԾՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2012Թ. ԲՅՈՒՋԵԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ելնելով անհրաժեշտությունից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Նվազեցնել՝

1.1. Քաղաքապետարանի /բաժին 01, խումբ 1, դաս 1/ «Սոցիալական ապահովության վճարներ» հոդվածը /հոդ. 4131/ 580.0 հազ. դրամ, «Կոմունալ ծառայություններ» հոդվածը /հոդ. 4213/ 570.0 հազ. դրամ, «Կապի ծառայություններ» հոդվածը /հոդ. 4214/ 1810.0 հազ. դրամ, «Ներկայացուցչական ծախսեր» հոդվածը /հոդ. 4237/ 869.4 հազ. դրամ, «Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» հոդվածը /հոդ. 4239/ 500.0 հազ. դրամ, «Գրասենյակային նյութեր և հագուստ» հոդվածը /հոդ. 4261/ 400.0 հազ. դրամ, «Կենցաղային և հանրային սննդի նյութեր» հոդվածը /հոդ. 4267/ 144.0 հազ. դրամ:

1.2. Բնակ. կոմունալ վարչության /բաժին 06, խումբ 6, դաս 1/ «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» հոդվածը /հոդ. 4111/ 146.0 հազ. դրամ, «Սոցիալական ապահովության վճարներ» հոդվածը /հոդ. 4131/ 1350.0 հազ. դրամ, «Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» հոդվածը /հոդ. 4239/ 1389.0 հազ. դրամ, «Գրասենյակային նյութեր և հագուստ» հոդվածը /հոդ. 4261/ 420.0 հազ. դրամ և «Այլ հարկեր» հոդվածին /հոդ. 4822/ 258.0 հազ. դրամ:

1.3. Կրթական, մշակութային և սպորտային նպաստներ բյուջեից միջոցները /բաժին 08, խումբ 6, դաս 1, հոդ. 4727/ 685.0 հազ. դրամ:

2. Ավելացնել՝

2.1. Քաղաքապետարանի /բաժին 01, խումբ 1, դաս 1/ «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» հոդվածին /հոդ. 4111/ 5854.4 հազ. դրամ, «Ապահովագրական ծախսեր» հոդվածին /հոդ. 4215/ 507.0 հազ. դրամ և «Այլ հարկեր» հոդվածին /հոդ. 4822/ 900.0 հազ. դրամ:

2.2. «Բարեկարգում» տնօրինության /բաժին 06, խումբ 2, դաս 1/ «Սոցիալական ապահովության վճարներ» հոդվածին /հոդ. 4131/ 210.0 հազ. դրամ, «Էներգետիկ ծառայություններ» հոդվածին

/հոդ. 4212/ 258.0 հազ. դրամ և «Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» հոդվածին /հոդ. 4239/ 200.0 հազ. դրամ:

2.3. Բնակ. կոմունալ վարչության /բաժին 06, խումբ 6, դաս 1/ «Տրանսպորտային նյութեր» հոդվածին /հոդ. 4264/ 370.0 հազ. դրամ և «Հատուկ նպատակային այլ նյութեր» հոդվածին /հոդ. 4269/ 822.0 հազ. դրամ:

3. Հանձնարարել ֆինանսական բաժնին ծախսերի նախահաշիվներում, ժամանակացույցերում և բյուջեի համապատասխան հատվածներում կատարելու անհրաժեշտ փոփոխություններ:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԷՋՄԻԱԾՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ա. ԱՍԼԱՆՅԱՆ

ՔԱՂՎԱԾՔ

# ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

# ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՆԻՍՏ ԹԻՎ 2 ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 21

«20» դեկտեմբերի 2012թ. ք. Էջմիածին

### Էջմիածին քաղաքի 2012թ. բյուջեում փոփոխություն կատարելու մասին

Էջմիածին քաղաքի 2012թ. բյուջեի վարչական և ֆոնդային մասում հավաքագրվել են լրացուցիչ եկամուտներ և միաժամանակ կարիք է առաջացել կատարելու անհրաժեշտ լրացուցիչ ծախսեր:

Ելնելով վերոհիշյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16 հոդվածի 1 մասի 3 կետի պահանջներով.

Էջմիածին քաղաքի Ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Վարչական և ֆոնդային մասի եկամուտները լրացուցիչ հավաքագրված մուտքերի հաշվին ավելացնել՝ վարչական մաս 31000.0 հազ. դրամ և հաստատել՝ 990857.9 հազ. դրամ, ֆոնդային մաս 6675.5 հազ. դրամ և հաստատել՝ 56675.5 հազ. դրամ:
   Նշված ավելացումը կատարել՝
   վարչական մասում
   ա/ գույքահարկ փոխադրամիջոցից՝ 20500.0 հազ. դրամ և հաստատել 113898.0 հազ. դրամ;
   բ/ հողի հարկի գծով՝ 6000.0 հազ. դրամ և այն հաստատել 67026.0 հազ. դրամ;
   գ/ ինքնակամ շինությունների օրինականացման համար վճարները՝ 3000.0 հազ. դրամ և հաստատել 6500.0 հազ. դրամ
   դ/ համայնքի սեփականություն համարվող ոչ գյուղ. նշանակության հողերի վարձավճարները՝ 1500.0 հազ. դրամ և հաստատել 21871.4 հազ. դրամ:
   ֆոնդային մասում
   ա/ հողի օտարումից մուտքեր՝ 6156.6 հազ. դրամ և հաստատել՝48156.6 հազ. դրամ;
   բ/ այլ հիմնական միջոցներից մուտքեր՝ 518.4 հազ. դրամ:
2. Վարչական մասի ծախսերը ավելացնել 31000.0 հազ. դրամ և հաստատել 1015210.9 հազ. դրամ և այն բաշխել՝
   ա/ Քաղաքապետարանի /բաժին 01, խումբ 1, դաս 1/ «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» հոդվածին /հոդ. 4111/ 500.0 հազ. դրամ, «Էներգետիկ ծառայություններ» հոդվածին /հոդ. 4212/ 1100.0 հազ. դրամ և «Տրանսպորտային նյութեր» հոդվածին /հոդ. 4264/ 150.0 հազ. դրամ:
   բ/ «Բարեկարգում» տնօրինության /բաժին 06, խումբ 2, դաս 1/ «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» հոդվածին /հոդ. 4111/ 5050.0 հազ. դրամ, «Էներգետիկ ծառայություններ» հոդվածին /հոդ. 4212/ 2500.0 հազ. դրամ, «Տրանսպորտային նյութեր» հոդվածին /հոդ. 4264/ 650.0 հազ. դրամ, «Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում» հոդվածին /հոդ. 4251/ 5610.0 հազ. դրամ և «Հատուկ նպատակային այլ նյութեր» հոդվածին /հոդ. 4269/ 5000.0 հազ. դրամ:
   գ/ Բնակ. կոմունալ վարչության /բաժին 06, խումբ 6, դաս 1/ «Տրանսպորտային նյութեր» հոդվածին /հոդ. 4264/ 5150 հազ. դրամ;
   դ/ Համաքաղաքային միջոցառումներ /բաժին 08, խումբ 2, դաս 4, հոդ. 4239/ 1040.0 հազ. դրամ:
   ե/ Այլ նպաստներ բյուջեից /բաժին 10, խումբ 7, դաս 1, հոդ. 4729/ 4250.0 հազ. դրամ:
3. Ֆոնդային մասի ծախսերը ավելացնել 6675.5 հազ. դրամ և հաստատել 61495.5 հազ. դրամ և այն բաշխել՝

ՔԱՂՎԱԾՔ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

# ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՆԻՍՏ ԹԻՎ 2 ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 21

«20» դեկտեմբերի 2012թ. ք. Էջմիածին

ա/ Քաղաքապետարանի /բաժին 01, խումբ 1, դաս 1/ «Շենք. շին. կապ. նորոգում» հոդվածին /հոդ. 5113/ 925.5 հազ. դրամ և «Վարչական սարքավորումներ» հոդվածին /հոդ. 5122/ 1248.0 հազ. դրամ:
բ/ «Բարեկարգում» տնօրինության /բաժին 06, խումբ 1, դաս 1/ «Շենք. շին. կապ. նորոգում» հոդվածին /հոդ. 5113/ 3322.0 հազ. դրամ:
գ/ Բնակ. կոմունալ վարչության /բաժին 06, խումբ 6, դաս 1/ «Շենք. շին. կապ. նորոգում» հոդվածին /հոդ. 5113/ 320.0 հազ. դրամ և «Վարչական սարքավորումներ» հոդվածին /հոդ. 5122/ 860.0 հազ. դրամ:

4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

ԷՋՄԻԱԾՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ՄԵԼԱՆՅԱՆ

ՔԱՂՎԱԾՔ

# ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
# ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՆԻՍՏ ԹԻՎ 2 ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 22

«20» դեկտեմբերի 2012թ. ք. Էջմիածին

**Հայաստանի Հանրապետության կառավարության 2012թ դեկտեմբերի 6-ի թիվ 1572-Ն որոշման համաձայն Էջմիածնի քաղաքային համայնքի կապիտալ սուբվենցիա հատկացնելու հետևանքով համայնքի 2012թ բյուջեում փոփոխություն կատարելու մասին**

Հաշվի առնելով այն հանգամանքը,որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2012թ դեկտեմբերի 6-ի թիվ 1572-Ն որոշմամբ Էջմիածնի քաղաքապետի ենթակայության Կոմիտասի անվան մշակույթիպալատի համար գույք ձեռք բերելու նպատակով հատկացվել է կապիտալ սուբվենցիա 25000.0 հազ. դրամի չափով:

ՈՐՈՇՈՒՄ Է`

1. Էջմիածին քաղաքի 2012թ բյուջեի եկամտային մասում ավելացնել 25000.0 հազ. դրամ:
2. Ծախսային մասում նշված գումարը ուղղել քաղաքապետարանի /բաժին 01, խումբ 1, դաս 1/ «Վարչական սարքավորումներ» հոդվածին /հոդ. 5122/

**ԷՋՄԻԱԾՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

Իսկականի հետ ճիշտ է
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Մ. ՓԱԼԱՆՅԱՆ